ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայագիտություն

ՀԱՐՑԱՐԿ

ISSN 1829-4030

3 (12)

ԵՐԵՎԱՆ - 2017

ԵԼԵՆԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր *– Արցախյան պատերազմ, քառօրյա պատերազմ, հրադադարի ռեժիմ, ԼՂՀ, ռազմական գործողություններ, տեղեկատվական պատերազմ, միջազգային մամուլ, ադրբեջանական քարոզչություն, հայկական լրատվադաշտ*

2016 թ. ապրիլյան առաջին օրերի իրադարձությունները ղարաբաղյան հակամարտության տարածքում, որը կոչվեց «քառօրյա պատերազմ», ցնցեց Հայաստանը և բազմամիլիոնանոց հայկական սփյուռքը: Այն դարձավ հրադադարի 22 տարիների ամենադրամատիկ իրադարձությունը: Ապրիլյան պատերազմը վճռորոշ դեր ունեցավ միջազգային միջնորդների և ԼՂՀ ու Ադրբեջանի հետագա հարաբերությունների վրա: Նախորդ տարիներին, իհարկե, արձանագրվել են բազմաթիվ սահմանային միջադեպեր, սակայն մինչև 2014 թ. ամառը իրավիճակը եղել է համեմատաբար կայուն և կանխատեսելի: Նշենք, որ 1994 թ. մայիսյան անժամկետ զինադադարից ի վեր Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը տվել են ավելի քան 1000, իսկ Ադրբեջանը, ըստ ոչ պաշտոնական տվյալների, 2000 զոհ՝ հիմնականում 18-20 տարեկան ժամկետային զինծառայողներ: 2015 թ. ադրբեջանական կողմը սկսեց կիրառել զինատեսակներ, որոնք օգտագործել էր պատերազմի թեժ շրջանում՝ 1992-1994 թթ.: 2016 թ. հունվար-մարտ ամիսներին նա շարունակում էր պարբերաբար խախտել հրադադարը հրազենի, նռնականետների, ականանետների կիրառմամբ: Ադրբեջանցի զինվորականները չէին դադարեցնում ԼՂՀ տարածք դիվերսիոն ներթափանցումների փորձերը, որոնց նպատակն էր ապակայունացնել իրավիճակը ԼՂՀ-ում:

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշեր՝ ժամը 3.00-ի սահմաններում, Ադրբեջանը, խախտելով 1994 թ. մայիսի 12-ին ձեռք բերված կրակի դադարեցման եռակողմ (Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջանի Հանրապետություն-Հայաստանի Հանրապետություն) համաձայնագիրը[1] և Ղարաբաղյան հակամարտու-

[1] 1994 թ. մայիսի 5-ին՝ Բիշքեկում Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի խորհրդարանական կառույցների ղեկավարների բանակցությունների ավարտին, ստորագրվեց Բիշքեկյան արձանագրությունը, որով կոչ էր արվում մայիսի 9-ի գիշերը դադարեցնել կրակը: Այդ օրը Լեռնային Ղարաբաղում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովը նախապատրաստեց «Անժամկետ հրադադարի մասին» համաձայնագիրը, որը նույն օրը ստորագրեց Ադրբեջանի պաշտպանության նախարար Մամեդրաֆի Մամեդովը,

թյունը բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու միջազգային պարտավորվածությունները, նախահարձակ ռազմական գործողություններ սկսեց հակամարտ զորքերի սահմանագծի ամբողջ երկայնքով: Կարելի է ասել, որ սանձազերծվեց Արցախյան պատերազմի նոր փուլ, որը դադարեց ապրիլի 5-ին հաստատված հրադադարով[1]:

Ապրիլյան ռազմական գործողություններն այս անգամ տարբերվում էին իրենց աննախադեպությամբ և ծավալով: Ադրբեջանական կողմը գործի էր դրել ահռելի քանակությամբ զրահատեխնիկա, համազարկային կայանքներ, ավիացիա, հրետանի: Հարվածների թիրախը ոչ միայն հայ դիրքապահներն էին, այլև հայկական բնակավայրերը և խաղաղ բնակչությունը: Ադրբեջանն Արցախի դեմ փորձեց կիրառել բարձրտեխնոլոգիական պատերազմ՝ գործի դնելով իսրայելական արտադրության ժամանակակից «Հարոփ» հարվածային անօդաչու թռչող սարքեր՝ հետախուզական և հարվածային ԱԹՍ-ները (դրոններ) և այլ զինատեսակներ: Ապրիլի 4-ից 5-ը հայ դիրքապահների ուղղությամբ կիրառեց զանգվածային ոչնչացման «ՏՕՍ» և «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր: Այդ օրերի ընթացքում հայկական կողմին հաջողվեց խոցել 12 տարատեսակ ԱԹՍ:

Ինչպես իրադարձությունների հետագա զարգացումը ցույց տվեց, այդ օրերին տարածաշրջանը դարձավ լայնածավալ ռազմական գործողությունների ականատես: Յուրաքանչյուր պատերազմի սկիզբ ցանկացած երկրում ուղեկցվում է հուզական բռնկումներով, որից զերծ չմնաց նաև Հայաստանը: Ռազմական գործողությունները լուսաբանելիս տարատեսակ տեղեկատվություն էր տարածվում թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական և թե՛ միջազգային մամուլում: Նշենք, որ լրատվական դաշտում հայկական կողմը բավականին արհեստավարժ գտնվեց: Հայկական գրեթե բոլոր կայքերը, լրատվամիջոցները ադրբեջանական սադրանքին տեղիք չտվեցին: Եղան, իհարկե, լրատվամիջոցներ, որոնցում տեղ գտան սխալ մեկնաբանություններ, որոնք ադրբեջանական կողմը շատ արագ տարածեց, ինչն այդ իրավիճակում անթույլատրելի էր: Պաշտոնական խողովակներով պարբերաբար հայտարարություն էր տարածվում, որոնցում հորդորում էին մեդիա պատասխանատուներին լինել ավելի զգոն, պահպանել զսպվածություն և տուրք չտալ սադրանքներին, առաջնորդվել պաշտոնական հաղորդագրություններով: Հայկական մեդիա տիրությում արտակարգ ռեժիմով ներկայացվում էին մարտական առավել թեժ կետերից հաղորդագրություններ ու տեսանյութեր հատկապես սահմանագծի հարավային՝ Հադրութի և հյուսիսային՝ Մարտա-

---

մայիսի 10-ին Երևանում այն ստորագրեց Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, իսկ մայիսի 11-ին՝ ԼՂ բանակի հրամանատար Սամվել Բաբայանը: Հրադադարի մասին գրավոր համաձայնությունն ուժի մեջ մտավ 1994 թ. մայիսի 12-ի կեսգիշերին:

[1] Տե՛ս «Ժամը 12:00-ից երկկողմանի կրակը դադարեցվել է», ԼՂՀ ՊԲ - http://hetq.am/arm/news/67051/zhamy-1200-ic-erkkoxmani-kraky-dadarecvel-e-lxh-pb.html:

կերտի ուղղություններից: Պաշտոնական խողովակներով հեռուստատեսությամբ պարբերաբար հայտարարվում էր ձեռնպահ մնալ որևէ մեկի հետ համացանցով կամ հեռախոսազանգերով տեղեկություն փոխանակելուց, դեպքերի մասին խոսելուց:

Ռազմական գործողությունների առաջին ժամերից ադրբեջանական լրատվամիջոցներն ակտիվություն չդրսևորեցին, այնինչ հայկական մամուլը ողողված էր իրադարձությունների լուսաբանմամբ: Այսպես՝ ապրիլի 2-ի առավոտյան՝ ժամը 8:18-ին, պաշտպանության բանակի (ՊԲ) մամուլի ծառայությունը հայտնեց[1], որ ադրբեջանական բանակը հարձակողական գործողություններ է ծավալել առաջնագծի ամբողջ երկայնքով: Ավելի ուշ՝ ժամը 9:10-ին, ՊԲ-ն տեղեկացրեց[2], որ ԼՂ հակաօդային պաշտպանության ուժերն առաջնագծի հյուսիսային ուղղությամբ ոչնչացրել են Ադրբեջանի զինված ուժերի 1 ուղղաթիռ: Ժամը 10:25-ին Արցախի ՊԲ-ն հայտնեց[3], որ ժամը 8:30-ի սահմանում ադրբեջանական զինուժի՝ «Գրադ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգով հայկական գյուղերի հրետակոծությունից Մարտունիի պաշտպանական շրջանի ուղղությամբ զոհվել է մեկ երեխա՝ Վաղինակ Գրիգորյանը (ծնված՝ 2004 թ.), ևս երկու երեխա ծանր վիրավորվել են: Կեսօրին հայտարարվեց, որ հակաօդային պաշտպանության ուժերը հարավարևելյան ուղղությամբ ևս մեկ ուղղաթիռ են խոցել[4], իսկ հյուսիսարևելյան ուղղությամբ՝ ևս երկու ԱԹՍ:

Արցախի ՊԲ-ն այնուհետև հայտնում է, որ ադրբեջանցիները առավոտյան հարավային ուղղությամբ կարողացել էին գրավել հայկական մի քանի դիրք, սակայն երեկոյան Արցախի նախագահ Բակո Սահակյանը պաշտոնապես հայտնում է, որ կորցրած բոլոր դիրքերը հետ են վերցվել: Նույն օրը՝ երեկոյան, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Ազգային անվտանգության խորհրդի նիստ է հրավիրում[5], որի ժամանակ ներկայացնում է իրավիճակը և հատարարում՝ հայկական կողմն ունի 18 զոհ և 35 վիրավոր: Այս ընթացքում հակառակորդը շարունակում էր լարված պահել իրավիճակը հակամարտության գոտում՝ միաժամանակ անհեթեթ ու հակասական ապատեղեկատվություններ տարածելով լրատվական բոլոր հնարավոր միջոցներով և ուղղություններով: Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը և ԶԼՄ-ներն առաջին ժամերի ընթացքում մարտական գործողությունների մասին ոչ մի հաղորդագրություն չեն տարածում: Միայն ժամը

---

[1] Տե՛ս Հաղորդագրություն, 02 ապրիլի, 2016 թ., ժամը 8:18 - http://nkrmil.am/news/view/198:

[2] Տե՛ս նույն տեղում, ժամը 9:10 - http://nkrmil.am/news/view/197:

[3] Տե՛ս նույն տեղում, ժամը 10:25 - http://nkrmil.am/news/view/196:

[4] Տե՛ս նույն տեղում, ժամը 12:50 - http://nkrmil.am/news/view/195:

[5] Տե՛ս (Տեսանյութ) ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Ազգային անվտանգության խորհրդի նիստում, ժամը 21:27, 02.04.2016 - https://armeniasputnik.am/video/20160402/2703043.html:

9:30-ին Ադրբեջանի ՊՆ մամուլի ծառայությունը, մարտերը սկսելու համար մեղադրելով հայկական կողմին, հայտնում է, որ զինված ուժերի ստորաբաժանումները փորձում են կասեցնել ադրբեջանական բնակատեղիներին հարվածող հայկական ստորաբաժանումներին, և հերքում է ադրբեջանական ուղղաթիռ ոչնչացնելու մասին տեղեկությունը: Մինչ պաշտոնական աղբյուրները լռում էին, սոցիալական ցանցերի՝ ադրբեջանցի օգտատերերը պարբերաբար, այսպես ասած, թարմացնում էին տեղեկությունները՝ հաղորդելով զոհերի, կորուստների մասին: Միայն ժամը 17:00-ի մոտակայքում Ադրբեջանը պաշտոնապես հայտնում է, որ մարտական գործողությունների ընթացքում կորցրել է 12 զինվոր, 1 ուղղաթիռ և 1 տանկ:

Այնուհետև ադրբեջանական ՊՆ հայտնում է, որ Ադրբեջանը իր վերահսկողության տակ է վերցրել «Լելե Թեփե» և այլ բարձունքներ հայկական Թալիշ, Սեյսուլան գյուղերի շրջանում: ՊՆ-ն լրատվամիջոցներին միաժամանակ հրահանգում է չհրապարակել ո՛չ պաշտոնական տեղեկատվություն: Օրինակ՝ սահմանին տիրող լարվածությունից մի քանի ժամ անց ադրբեջանական կողմը բավական ակտիվ սկսեց կեղծ տեղեկատվություն տարածել թե՛ լրատվական կայքերով և թե՛ սոցիալական ցանցերի օգտատերի միջոցով: Ռազմական գործողությունների ընթացքում ադրբեջանական լրատվամիջոցները ներկայացնում էին իրենց բանակի հզորության, ուժի և գրանցած հաջողությունների մասին նյութեր, որոնք հաճախ հղվում էին ոչ միայն ադրբեջանական, այլև Ադրբեջանի դիրքերից հանդես եկող՝ «երրորդ կողմ» ներկայացնող աղբյուրներին: Ադրբեջանական տեքստերում հայկական կողմը բնութագրվում էր «անմարտունակ, բարոյալքված, զենքի պակաս ունեցող բանակ, որը մեծ կորուստներ կրեց ռազմական գործողությունների հենց առաջին օրվանից»: Բնականաբար սա առաջին հերթին ուղղված էր ներքին լսարանին՝ սեփական բանակի նկատմամբ վստահություն ներշնչելու և, միևնույն ժամանակ հայկական ԶՈՒ-ն վարկաբեկելու, ինչպես նաև ՀՀ-ում և ԼՂՀ-ում պարտվողական տրամադրություններ տարածելու նպատակով: Նույն նպատակին է ծառայել նաև հայկական կողմում տիրող խուճապի, վախի մթնոլորտի, սահմանամերձ շրջաններից հայ բնակչության փախուստի մասին նյութերի մատուցումը: Ադրբեջանական ամբողջ մեդիա դաշտը լի էր հայկական կողմի զոհերի, ոչնչացված զինվորական տեխնիկայի մասին տեղեկություններով: Առճակատման առաջին իսկ օրերից նյութերում շրջանառվում էր այն տեսակետը, որ ադրբեջանական կողմը պատրաստ է դադարեցնել կրակը, սակայն հայկական կողմը շարունակում է զինված գործողությունները: Ապրիլի 3-ին քարոզչական նպատակով ադրբեջանական լրատվամիջոցները օգտագործեցին Ադրբեջանի ՊՆ-ի՝ կրակը միակողմանի դադարեցնելու մասին պաշտոնական հայտարարությունը՝ հայկական կողմին իբրև «առճակատում հրահրող, հարձակվող» ներկայացնելու մտադրությամբ: Մինչդեռ ադրբեջանական կողմի կորուստների, զոհերի թվի մասին սակավ տեղեկատվություն էր տարածվում:

Ադրբեջանը իր քաղաքականությամբ փորձում էր հերքել փաստերը, մինչդեռ համացանցում հայտնվեց հայկական ռազմական դիրքերը գրոհող իսրայելական ԱԹՍ-ի մասին տեսանյութ[1]: Պատերազմի գոտուց համացանցում տարածվող Ադրբեջանի, ԼՂՀ-ի ու ՀՀ-ի պաշտպանական գերատեսչությունների տարածած տեղեկատվությունները հակասում էին միմյանց: Ռազմական գործողությունների լուսաբանման ընթացքում ադրբեջանական կողմը կրկին դիմեց տեղեկատվական-հոգեբանական բավականին պարզունակ քայլերի: Քարոզչական դաշտում, հատկապես սոցիալական ցանցերում, հայտնվեցին հայկական անուններով բազմաթիվ կեղծ օգտատերեր, որոնք տեղեկատվություն կորզելու նպատակով Արցախում տիրող իրավիճակի, զոհերի, տարածքային կորուստների, զինվորների պատրաստվածության և բարոյահոգեբանական վիճակի վերաբերյալ հայալեզու հարցեր էին ուղղում հայ օգտատերերին:

Ադրբեջանական կողմը այդ օրերին հղումներ էր կատարում տարբեր պաշտոնական աղբյուրների, փորձագետների, լրագրողների, ականատեսների, երրորդ կողմ ներկայացնող օտարերկրյա և հայկական կամ թվացյալ հայկական աղբյուրների: Օտարերկրյա աղբյուրների ընդգրկումը հետապնդում էր մատուցված տեղեկատվությանն օբյեկտիվություն հաղորդելու նպատակ: Իբր թե միջազգային հանրությունը պաշտպանում է Ադրբեջանի տեսակետները:

Բնականաբար, դա Ադրբեջանի իշխանությունների որդեգրած վերահսկման մեխանիզմներից էր: Օրինակ՝ անկախ «meydan.tv»-ի դեմ քրեական գործ հարուցվեց[2] այն բանից հետո, երբ ըստ այդ կայքում զետեղված նյութի՝ ադրբեջանական կողմի զոհերի թիվը հասնում էր 93-ի, այն դեպքում, երբ պաշտոնական աղբյուրները նշում էին ընդամենը 31 զոհի մասին: Ադրբեջանական կողմի կեղծիքը բացահայտ էր և չէր կարող որևէ ազդեցություն կամ հետևանքներ ունենալ հայկական կողմի վրա:

Ականատես եղանք, թե ինչպես «Քառօրյա պատերազմի» օրերին Ադրբեջանը չկարողացավ խուսափել անախորժ իրավիճակներից՝ լրագրողների գործունեության և նրանց ազատությունների ոտնահարման առումով: Մասնավորապես, «Լայֆ Նյուզ»-ի լրագրողները վտարվեցին Ադրբեջանից, քանի որ փորձել էին օբյեկտիվորեն ներկայացնել սահմանին և շփման գծում տիրող լարված իրավիճակը: Այդ լրատվամիջոցը հայտնում է, որ Ադրբեջանի իշխանությունները փորձել են ստիպել սեփական լրագրողներին հրապարակել իրենց համար շահավետ տեղեկատվություն (մասնավորապես պնդել, որ հայկական կողմն է առաջինը կրակ բացել), լուսաբանել իրադարձու-

---

[1] Տե՛ս «Հրապարակվել է ադրբեջանական ոչնչացված ԱԹՍ-ի նոր տեսանյութը» - http://www.panarmenian.net/arm/news/209636/, 5 ապրիլի 2016:

[2] Տե՛ս Fifteen journalists named in criminal investigation of Meydan TV - https://www.meydan.tv/en/site/news/13829/:

թյունները «այնպես, ինչպես իրենց է անհրաժեշտ»[1] և այլն, իսկ լրագրողները հրաժարվել են: Ադրբեջանական կողմին զայրացրել էր հատկապես լրատվամիջոցի պատրաստած այն ռեպորտաժը, որտեղ նշել էին Իսլամական պետության գրոհայինների՝ Ադրբեջանի կողմից կռվելու, ինչպես նաև սահմանամերձ Թարթառի բնակիչների՝ իրենց տները լքելու մասին լուրեր[2]:

Իսկ երբ օտարերկրյա աղբյուրները հայտնում են Ադրբեջանի համար ոչ ցանկալի տեսակետ, նրանց մեղադրանք է ներկայացվում կողմնակալության, հակամարտությունը միակողմանի լուսաբանելու մեջ:

Գորանբոյի շրջանում անվտանգության աշխատակիցները բերման էին ենթարկել և մի քանի ժամ շարունակ հարցաքննել վրացական «Ռուսթավի-2» հեռուստալիքի նկարահանող խմբին՝ հավատարմագրում չանցնելու պատճառաբանությամբ:

Սակայն ադրբեջանական կողմի ոչ ճիշտ աշխատանքը, թերացումը միջազգային հեղինակավոր լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ տվեցին այլ արդյունք: Միջազգային տարբեր լրատվամիջոցների և լրագրողների համար հնարավորություն ստեղծվեց հղել հենց հայկական աղբյուրները: Աշխարհի ճանաչված լրատվամիջոցներից («BBC», «CNN», «New York Times», «The Washington Post») տասնյակ լրագրողներ սեփական նյութերը տեղում պատրաստելու համար ժամանեցին Ստեփանակերտ, իսկ Ադրբեջանը չհամագործակցեց, ավելին՝ չկարողացավ աշխատել նրանց ներկայացուցիչների հետ: Միջազգային շատ լրագրողներ հնարավորություն ունեցան Հայաստանի տարածքով առանց որևէ խոչընդոտի մուտք գործել Լեռնային Ղարաբաղ և Ստեփանակերտում անմիջապես հավատարմագրում անցնել: Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը միջազգային լրատվամիջոցներին տրամադրել էր արբանյակային անվճար հեռարձակման հնարավորություն, իսկ լրագրողներն ազատորեն տեղաշարժվում էին քաղաքացիական փոխադրամիջոցներով՝ շփման գծի երկայնքին մոտ բնակավայրեր այցելելու համար, օրինակ՝ Թալիշ կամ Մարտունի:

Համացանցում շրջանառվեց հակառակորդի խուճապի և պարտվողական տրամադրության մասին վկայող տեսանյութեր, որտեղ երևում էր՝ Ալիևի «արգելափակող ջոկատները» գնդակահարում էին իրենց փախչող զինվորներին: Այս ընթացքում շրջանառվեց տեսանյութ[3], որտեղ ներկայացվում էր, թե ինչպես է հակառակորդն իր թիկունքում պայթեցնում սեփական

---

[1] Տե՛ս МВД Азербайджана просило журналистов искажать данные о ситуации в НКР - https://life.ru/t/%D0%BD%D0%BE%D0%B2%D0%BE%D1%81%D1%82%D0%B8/195000

[2] Տե՛ս Почему врёт МИД Азербайджана - https://life.ru/t/%D0%BD%D0%BE%D0%B2%D0%BE%D1%81%D1%82%D0%B8/195025:

[3] Տե՛ս «Ինչպես են կրակում նահանջող ադրբեջանցի զինվորների ուղղությամբ» (տեսանյութ) - http://armtimes.com/hy/article/82927:

կամուրջները, որպեսզի խոչընդոտի հայկական զորքերի հավանական հարձակումը դեպի Ադրբեջանի տարածքի խորքերը: Ռազմական գործողությունների ընթացքում հրապարակվեցին նաև իսլամիստ ծայրահեղականների և Թուրքիայում պատրաստություն անցած հատուկ ջոկատայինների՝ ԼՂՀ ՊԲ դիրքեր դիվերսիոն ներթափանցման մասին լուրեր, որոնք ավելի մեծ խուճապի մատնեցին հայ հասարակությանը:

Ռազմական գործողությունների երրորդ օրը պատերազմի գոտուց ոչ պաշտոնական տեղեկատվություն էր տարածվում, ըստ որի՝ եթե փոքր-ինչ շարունակվեր նման իրավիճակը, հայկական կողմը պատերազմական գործողությունները կտեղափոխեր թշնամու տարածք, այսինքն՝ կհարվածեր Ադրբեջանի՝ շփման գծից խորք գտնվող ենթակառուցվածքներին՝ հատկապես նավթային խողովակաշարերին ու այլ կարևոր կառույցների, նաև ռազմական հրամանատարական բոլոր կարևոր կետերի: Բայց հայկական կողմը բավարարվեց նման հարված հասցնելու բանավոր սպառնալիքով:

Այդ օրերին Ադրբեջանի սանձազերծած հարձակողական գործողությունը անուղղակիորեն նպաստեց, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հայտնվի միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Արցախում տեղի ունեցող իրադարձությունները դարձան գլխավոր թեմա միջազգային այնպիսի լրատվական կայքերում և հեռուստատեսային ալիքներում, ինչպիսիք են՝ «BBC»-ն, «Euro News»-ը, «CNN»-ը, «New York Times»-ը, «The Washington Post»-ը, «Aljazeera»-ն և այլն:

Սակայն արևմտյան հայտնի լրատվամիջոցների՝ այդ օրերի մշտադիտարկումը վկայում է, որ հրապարակվող նյութերն այնքան էլ օբյեկտիվ չէին, և դրանցում հստակ չէր մատնանշվում, թե որ կողմն է նախահարձակ եղել: Միջազգային լրատվամիջոցներից առաջիններից մեկը, որ ռազմական գործողությունների վերսկսման մասին տեղեկացրեց, «Associated Press»[1]-ն էր: Այնուհետև իրադարձություններին արձագանքեցին «ABC News»-ը, «The Washington Post»-ը, «Theguardian»[2]-ը: Բոլոր միջազգային լրատվամիջոցներից ամենաառաջինը «Euronews»-ն էր, որ հենց ապրիլի 2-ին հրապարակեց լուսանկարներ և տեսանյութեր մարտական գործողությունների վայրից: Տեսանյութում հնչում էր Ադրբեջանի պաշտպանության նախարարի խոսքն առ այն, որ խոցվել են վեց հայկական տանկեր, հայկական կողմում կան 100-ից ավելի զոհեր և վիրավորներ, իսկ ադրբեջանական կողմն ունի ընդամենը 12 զոհ: Ապա ԼՂՀ պաշտպանության բանակից հայտնեցին, որ հայկական ուժերը ադրբեջանական «Mi-24» ուղղաթիռ են խոցել (տեսանյութում ներկայացված ուղղաթիռի լուսանկարները լրատվամիջոցը վերցրել էր ԼՂՀ

---

[1] Տե՛ս AP Explains: The roots of the conflict in Nagorno-Karabakh -https://apnews.com/6c9aafaa91f247969e8233688f4f7923/ap-explains-roots-conflict-nagorno-karabakh:

[2] Տե՛ս Conflict erupts between Azerbaijani and Armenian forces -https://www.theguardian.com/world/2016/apr/02/conflict-erupts-between-azerbaijani-and-armenian-forces:

ԱԳՆ կայքից): Հայկական կողմը այդ պահի դրությամբ հայտնում է, որ ունի 18 զոհ և 35 վիրավոր: Տեսանյութում ներկայացվում էր նաև այն, որ 1994 թ. ի վեր երկու կողմերը խոսում են քաղաքացիական անձանց մահվան մասին՝ բռնության մեջ մեղադրելով մեկը մյուսին:

«Associated Press»-ը, հղելով ԼՂՀ մամուլի ծառայությանը, հայտնեց, որ Ադրբեջանը կործանիչներ և ծանր հրետանի է օգտագործում Լեռնային Ղարաբաղի սահմանին: Լրատվամիջոցը վկայակոչում էր Ադրբեջանի ՊՆ խոսնակին, որը նշում էր, թե իբր ամեն ինչ սկսվել է հայկական կողմից հրետանի օգտագործելուց հետո: «The Washington Post»-ը[1] հենց ապրիլի երկուսին հրապարակեց հոդված, որտեղ տեղեկացրեց 31 զոհերի մասին՝ մեջբերելով Ադրբեջանի ՊՆ-ի և Արցախի ՊՆ-ի հայտարարությունները: Այնտեղ նշվում էր, որ երկու կողմերը փոխադարձ մեղադրանքներ են հնչեցնում միմյանց հասցեին նախահարձակ գործողություններ սկսելու համար:

«The Washington Post»[2]-ի հրապարակած հոդվածում նշվում էր, որ Ադրբեջանը հայկական դիրքերի վրա գրոհում է իսրայելական արտադրության գերժամանակակից «Հարոփ» հարվածային անօդաչու թռչող սարքերով: Լրագիրն իր հոդվածում օգտագործում էր նաև Հայաստանի ՊՆ խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի՝ «Ռիա Նովոստի»-ին[3] տված հարցազրույցը: Այնուհետև հոդվածում ներկայացվում էին հակամարտության հիմքերը և սկիզբը: Մեկ այլ հրապարակման մեջ պատմում էին ադրբեջանական խոցված ուղղաթիռի մասին, որը համառորեն հերքում էր Ադրբեջանի ՊՆ խոսնակը, իհարկե մինչ այն պահը, երբ ԼՂՀ ուժերը ևս մեկ ուղղաթիռ խոցեցին և որպես ապացույց հրապարակեցին լուսանկարներ և տեսանյութեր:

Բրիտանական «BBC»-ն[4], ներկայացնելով դեպքերի ընթացքը, նշում էր զոհերի ու վիրավորների մասին, հրապարակում լուսանկարներ հայկական կողմից: Հոդվածում մեջբերվում էր նաև ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի կոչը՝ ուղղված ղարաբաղյան հակամարտող կողմերին՝ վերջ տալ ռազմական գործողություններին և առճակատումը լուծել բացառապես խաղաղ ճանապարհով: Հոդվածում անդրադարձ էր կատարվում Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված հակամարտության պատմությանը, 1990-ականների սկզբին տեղի ունեցած պատերազմին և բնակչության տեղահանությանը:

---

[1] Տե՛ս At least 31 reported killed in fighting between Armenian, Azerbaijani forces - https://www.washingtonpost.com/world/at-least-31-reported-killed-in-fighting-between-armenian-azerbaijani-forces/2016/04/02/fc328ab6-f8ff-11e5-8b23-538270a1ca31_story.html?utm_term=.51ffd40bd0cd:

[2] Տե՛ս Israeli-made kamikaze drone spotted in Nagorno-Karabakh conflict -https://www.washingtonpost.com/news/checkpoint/wp/2016/04/05/israeli-made-kamikaze-drone-spotted-in-nagorno-karabakh-conflict/?utm_term=.6a6d2d261d4f:

[3] Տե՛ս Ереван сообщает о гибели 7 человек в Карабахе при ударе беспилотника - https://ria.ru/world/20160404/1402441265.html:

[4] Տե՛ս Nagorno-Karabakh violence: Worst clashes in decades kill dozens - http://www.bbc.com/news/world-europe-35949991:

Բացառիկ էր «CNN»-ի[1] ուղիղ եթերով Ադրբեջանի և ԼՂՀ արտգործնախարարներ Էլմար Մամեդյարովի և Կարեն Միրզոյանի մասնակցությամբ հեռարձակումը, որտեղ Արցախը փաստացի ներկայացվեց որպես հակամարտության կողմ, իսկ Ադրբեջանի գլխավոր դիվանագետը խճճվեց իր իսկ կողմից ներկայացվող ապատեղեկատվության մեջ:

Արաբական միջազգային «Al Jazeera» տարածաշրջանային հեռուստաընկերությունը բավականին ակտիվ սկսեց մեկնաբանել դեպքերը հատկապես ապրիլի 3-ից սկսած: Նախ հոդված հրապարակեց ռազմական գործողությունների մասին[2], ղարաբաղյան հակամարտությանն անդրադարձավ ընդարձակ ռեպորտաժով, որում նշվեց, որ ռազմական գործողությունները սանձազերծել է Ադրբեջանը:

Բավականին չեզոք դիրք էր գրավել վրացական մամուլը՝ ներկայացնելով միայն ԼՂՀ-ի և Ադրբեջանի տարածած պաշտոնական տեղեկատվությունը:

Ռուսական լրատվամիջոցները, հատկապես լրատվական կայքերը («Gazeta.ru», «Lenta.ru», «Tass.ru», «Ria.ru»), հակամարտության՝ Ադրբեջանի սանձազերծած արկածախնդրության մասին հայտնում էին՝ հղում կատարելով հայկական աղբյուրներին, մասնավորապես՝ ԼՂՀ ՊՆ մամուլի ծառայությանը: Միայն ժամեր անց, երբ հակառակորդը սկսեց ապատեղեկատվություն տարածել, ռուսական լրատվամիջոցների նշանակալի մասը անցավ ադրբեջանական քարոզչության աղբյուրներին: Օրինակ՝ այնպիսի ճանաչում վայելող կայքեր, ինչպիսին է, օրինակ, «Lenta»-ն, իրենց գլխավոր նյութերում տեղադրում էին Ադրբեջանի մատնանշած թվերը:

Հայկական մամուլում այդ օրերին բուռն քննարկվում էր ռուսական կողմի՝ որպես դաշնակցի ցուցաբերած «սառնությունը», նաև այն փաստը, որ հակառակորդը հայկական ուժերին հարվածում է ՌԴ-ից գնած ծանր զենքերով (օրինակ՝ «TOC 1» և «Սմերչ»):

Մյուս կարևոր հանգամանքն այն էր, որ առաջատար լրատվամիջոցներն Արցախին վերաբերող տեսանյութերի մեծ մասում ադրբեջանական պաշտոնական տեսակետի հետ մեկտեղ ներկայացնում էին պաշտոնական Ստեփանակերտի տեսակետը, զրույցներ, տեսանյութեր հրապարակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնյաների հետ: Զուգահեռաբար առաջատար վերլուծական ընկերությունները տպագրեցին բազմաթիվ հոդվածներ, որոնցում փորձ էր արվում հասկանալ ղարաբաղյան հակամարտության ակունքները, կողմերի դիրքորոշումները, ինչպես նաև ներկա լարվածության պատճառները: Հիմնականում նրանց տեսակետը այն էր, որ

---

[1] Տե՛ս Nagorno Karabakh Foreign Minister to CNN It's not about territory, it's about self determination -https://www.youtube.com/watch?v=kmG6qBKrZ9k:

[2] Տե՛ս Dozens killed in Nagorno-Karabakh clashes - http://www.aljazeera.com/news/2016/04/heavy-fighting-erupts-armenian-azeri-border-160402084508361.html:

որպես 1990-ականների սկզբին պատերազմում պարտված կողմ՝ հրադադարի խախտումն ավելի շատ բխում էր Ադրբեջանի շահերից:

2016 թ. ապրիլյան պատերազմը ևս մեկ անգամ ցույց տվեց ռազմական գործողությունների լուսաբանման գործում ԶԼՄ-ների կարևորությունը: Պատերազմի հանկարծակի բռնկումն ակնհայտ դարձրեց երկու կողմից էլ լրագրության ոլորտում առկա բացերն ու թերությունները: Իհարկե, ադրբեջանական մամուլի և սոցցանցերի քարոզչական մեթոդները դրսի լսարանի վրա թողեցին իրենց հպանցիկ ազդեցությունը, սակայն հայկական և տարբեր միջազգային լրատվամիջոցների կողմի ճիշտ աշխատանքի շնորհիվ հակառակորդին որպես ագրեսիա հրահրող, ահաբեկիչ-պետություն ներկայացնող պիտակը կարող է երկար հիշվել: Բացի այդ, հակառակ Ադրբեջանի ակնկալիքների՝ հայ հասարակությունը խուճապի չմատնվեց. ավելին՝ համախմբման հզոր ալիք սկսվեց: Տեղեկատվական դաշտում հայկական կողմի ծավալած գործունեությունն ավելի արժանահավատ եղավ, ինչի մասին փաստում են ոչ միայն հայ, այլև միջազգային առաջատար լրատվամիջոցների փորձառու մասնագետները:

Елена Зограбян – *Освещение апрельских событий в международных СМИ*

В статье представлены военные действия, развернувшиеся в апрельской войне 2016 г. Рассматриваются опубликованные в армянских, арцахских и азербайджанских СМИ материалы о военных действиях в четырехдневной войне, дезинформация, подаваемая азербайджанской стороной, и пропагандистская фальсификация. Представлены работы ряда международных авторитетных изданий, также рассматривается сотрудничество местных и международных СМИ.

Elena Zohrabyan – *Coverage of the April War in the International Media*

The article presents the process of military action during 2016 April war. Reference is made to the published materials on the military actions of the conflicting parties - the Armenian, Artsakh and Azerbaijani media during the four-day war, the misinformation spread by the Azerbaijani side and the propaganda techniques. The work of a number of authoritative international media is presented; it also touches upon the cooperation between local and international mass media.